ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ. Ազատագրական պայքարի ուղիներում. չորս գրքով, գիրք I, II, Երևան. «Հայագիտակ» հրատ., 2003, 1574 էջ:

ՀՀ ԳԱԱ իսկական անդամ Հր. Սիմոնյանի բեղուն գրիչն ընթերցողի սեղանին է դրել շքեղ կազմով և հարուստ բովանդակությամբ մի մենագրություն «Ազատագրական պայքարի ուղիներում» վերտառությամբ: Աշխատությունը բաղկացած է չորս գրքից, որում ներկայացված է հայ ազատագրական շարժման վերջին էտապի 1905–1914 թթ. պատմությունը: Սույն գրախոսականում քննության են առնվում առաջին երկու գրքերը, որոնք ժամանակագրական առումով ընդգրկում են ռուսական առաջին հեղափոխության տարիները 1905–1907 թթ.:

Ինքնին հասկանալի է, թե ավելի քան 1500 էջ կազմող երկհատորյակում, որքան համակողմանի են քննության առնված ընդամենը երկուսուկես տարիների ընթացքում Հայաստանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները: Այսինքն հեղինակն իր առջև դրված խնդիրները քննել ու վերլուծել է ոչ այնքան լայնությամբ, որքան խորությամբ:

Առաջին անգամ հայ պատմագրության մեջ Հայաստանն իր երեք հատվածներով (արևելահայ, արևմտահայ և նույնիսկ պարսկահայ) դիտարկվել է մեկ ամբողջության մեջ: Բացահայտված են այդ երեք հատվածներից յուրաքանչյուրում հայ ազատագրական շարժման բնույթն ու յուրահատկությունները: Հեղինակն իրավացիորեն հայ ժողովրդի ազատագրական պայքարը, ըստ նրա ապրած հատվածների, զատորոշել է երեք ուղղություններ, որովհետև դարասկզբին դրանցից յուրաքանչյուրի առջև կանգնած էին կոնկրետ խնդիրներ, և բնականաբար յուրաքանչյուր հատված հանդես էր բերում տարբեր ռազմավարություն ու մարտավարություն: Եթե արևմտահայության համար գերակա խնդիրը հայրենիքի և ժողովրդի քաղաքական ազատագրությունն էր օսմանյան բիրտ լծից, ապա ռուսահայ-կովկասահայության համար այդ ժամանակ առաջին պլանում էր կանգնած սոցիալական ազատագրության խնդիրը, որին ածանցվում էր ազգային հարցի լուծումը: Իսկ ինչ վերաբերում էր համեմատաբար փոքրաթիվ պարսկահայ հատվածին, ապա, հանձին 1905–1911 թթ. իրանական հեղափոխության, պարսկահայությունն ակտիվորեն ներգրավվեց ավատապետական Իրանի սոցիալ-քաղաքական նորացման համար մղվող պայքարում:

Աշխատության մեջ փաստորեն տրվում է խնդրո առարկա ժամանակաշրջանում հայ ազատագրական պայքարի տարեգրությունը: Ավելին, հայոց պատմության այդ ժամանակաշրջանի ամենահրատապ հիմնահարցերը քննված են համառուսական ու համաշխարհային պատմության ընդհանուր ֆոնի վրա:

Նախ հեղինակի ուշադրության կենտրոնում է ռուսահայ իրականությունը, որտեղ դարասկզբին հայ ժողովրդին պատուհասած երկու իրադարձությունների՝ հայ եկեղեցու կալվածքների ու գույքի բռնագրավման, ինչպես նաև 1905 թ. փետրվարից սկսված թուրք-հայկական ընդհարումների հետևանքով իրավիճակը ծայրաստիճան լարվել էր: Հայ եկեղեցու կալվածքների ու գույքի բռնագրավման, թուրք-հայկական ընդհարումների սադրման գործողությունների, թուրքերին հովանավորելու, հայ ազատագրական շարժման նկատմամբ թշնամանքի ու հայահալած քաղաքականության մյուս դրսևորումների համար մենագրության հեղինակն անխնա քննադատության է ենթարկում ցարական կառավարությանը և տեղական իշխանություններին (սատրապներին): Սակայն քննադատել ցարիզմը ամենևին էլ չի նշանակում ցուցաբերել հակառուսականություն, ինչպես որ նախկինում հաճախ պարզունակորեն պատկերացնում էին շատերը:

Անդրկովկասի օրինակով բացահայտված է ռուսական ինքնակալության դասակարգային էությունը: Պրոֆ. Հր. Սիմոնյանը ցույց է տալիս, որ ինքնակալական համակարգին սոցիալ-դասակարգային առումով վստահելի լինելու տեսակետից Անդրկովկասի երեք հիմնական ազգերից ամենաննպաստ վիճակում էին հայտնվել հայերը, որոնք, ի տարբերություն վրացիների ու կովկասյան թուրքերի, ըստ էության, չեն ունեցել ազնվականական դաս: Ավելին, ցարական իշխանավորների և նրանց գրչակների կողմից հայերը դիտվում էին որպես հեղափոխականներ ու անջատականներ: Սրանք էին սոցիալ-դաղափարական այն դրդապատճառները, որոնք հիմք էին տալիս ռուսական իշխանություններին թուրք-հայկական ընդհարումների ժամանակ պաշտպանելու թուրքերին: Մյուս կողմից ցարիզմը, ազգամիջյան ընդհարումներ հրահրելով, նպատակ էր հետապնդում տարբեր ազդության աշխատավորների ուշադրությունը շեղել համառուսական սոցիալ-քաղաքական պայքարից ե դրանով իսկ խոշոր հարված հասցնել հեղափոխական պայքարին Կովկասում:

Անկասկած, 1905–1906 թթ. արևելահայ կյանքի նշանակալի իրադարձությունները թուրք-հայկական ընդհարումներն էին: Բավական է միայն ծանոթանալ թուրք-հայկական ընդհարումների նախապատմությանը (ակունքներին) և բուն ընթացքին տեսնելու համար, թե որքան խորն ու համակողմանի է ներկայացված այս կնճիռը, որը, ի դեպ, չի կորցրել իր արդիականությունը նաև մեր ժամանակներում: Այդ արյունալի ընդհարումները նկարագրված են ամենայն մանրամասնությամբ գյուղ առ գյուղ, գրվագ առ գրվագ, անուն առ անուն: Երբ կարդում ես ցարիզմի սադրանքով Բաքվի և այլ վայրերի հայկական կոտորածների մասին ծանր զգացում ես ապրում: Իսկ ծանոթանալով այն ժամանակվա թուրք մոլեռանդ խուժանի կատարած չարագործությունների (կոտորած, թալան, հրգեհ) նկարագրությանը, մեկ անգամ ևս համոզվում ես, որ այն իր կատարման ձևերով (ձեռագրով) հատկապես չէր տարբերվում մեր ժամանակների սումգայիթյան ոճրագործությունից: Բայց և չի մոռացվում նաև երևույթի մյուս կողմը՝ առանձին թուրքերի ցուցաբերած գթասրտության, հայերին պատսպարելու մասին վտանգելով իրենց կյանքը:

Հեղինակի տեսադաշտից դուրս չեն մնացել նաև թուրք-հայկական ընդհարումների «Կովկասյան Վանդեայի» փուլում ռուսական պատժիչ արշավախմբերի (ռուս զինվորների ու կազակների) կատարած բռնությունները հայկական գյուղերում՝ մասնավորապես Արցախի Վարանդայի մեկևկես տասնյակ գյուղերի նկատմամբ՝ էկզեկուցիաներ, տուգանքներ, ծեծ, սպանություններ, զանգվածային բռնաբարություններ կանանց, դեռահաս աղջիկների ու նույնիսկ պառավների նկատմամբ (տե՛ս գիրք I, էջ 665–671): Հայ «խռովարարներին» պատժելու համար զորքն ու կազակները մուտք էին գործում գյուղերը և կատարում զարհուրելի գործողություններ: Ցարական բյուրոկրատիայի կատարած անօրինականություններն եղել են այնքան աղաղակող ու դատապարտելի, որ առաջին Պետական դումայում հարցապնդում արած հայ պատգամավորներին միացել էին Կովկասի մուսուլման պատգամավորները (գիրք I, էջ 725).

Ժամանակաշրջանի հասարակական մտքի գնահատումների լայն հենքի վրա հեղինակը համակողմանիորեն բացահայտել է թուրք-հայկական ընդհարումների պատճառների ամբողջ ներկապնակը: Հր. Սիմոնյանի պատկերմամբ այն ոչ այնքան տնտեսական կամ սոցիալական էր, որքան ազգային-ցեղային, քաղաքական ու քաղաքակրթական (գիրք II, էջ 65–92):

Հատկանշական է, որ արյունահեղ ընդհարումների ժամանակ հայ ժողովրդին պատուհասած վտանգի առաջ հայ քաղաքական կուսակցությունները և լայն հասարակաշերտերը մի կողմ դնելով միջկուսակցական վեճերն ու հակասությունները (հնչակյան, դաշնակցական, էսէռ, սպեցիֆիկ), «բոլորն էլ կողք կողքի կռվում էին ընդհանուր թշնամու դեմ» (գիրք I, էջ 483): Բայց առանձնապես ամենածանրակշիռ գերակատարություն ունեցավ ՀՅԴ-ն: Աշխատության մեջ ըստ արժանվույն է գնահատված ՀՅԴ վճռորոշ դերը թաթար հլուզակ

զոջինների բանդաներին հակահարված տալու գործում (գիրք I, էջ 104–105): Անգամ ՀՅԴ ավանդական հակառակորդ «Մշակը» ընդհարումների այդ ծանր օրերին գրում էր. «Եվ դեռ գտնվում են մարդիկ, որոնք հանդգնում են անվանարկել կամ արհամարհել դաշնակցության ուժը և բարոյական ազդեցությունը: Հայ ժողովրդի համար ներկա օրերում չկա ուրիշ պաշտպանություն: Նա հանգիստ է, երբ կա դաշնակցությունը: Նա հավատում է այդ վստահելի ուժին» (գիրք I, էջ 507):

Աշխատության մեջ արվում են ընդհանրացումներ այն մասին, որ հայերի գիմադրական պայքարը և արժանի հակահարվածը Թուրք խուժանին մի կողմից փրկեց արևելահայ խառը բնակության շրջանները վերահաս բնաջնջումից, իսկ մյուս կողմից, հայդուկների օրինակով, ժողովրդի մեջ նեբարկվեց ազգային գիտակցության վերելք, մարտական ոգի, կռվելու ունակություն և ինքնապաշտպանվելու կարողություն:

Հեղինակը տալիս է ժողովրդական վրիժառության (անհատական տեռորի) գիտական բնութագիրը, այն միանգամայն տարբերակելով մեր ժամանակներում մարդկությանը ստատնացող նոր աղետից «միջազգային ահաբեկչությունից». «Վրեժխնդրական ակտերը,– գրում է Հր. Սիմոնյանը,– որոնք գործադրվում են դատնություն ապրող ժողովրդի զավակների կողմից, չի կարելի չփոթել և հաճախ գիտակցաբար նույնացնել «միջազգային ահաբեկչության» գործողություններին» (գիրք I, էջ 246): Այն ժամանակ հայ ազգային-քաղաքական կուսակցությունների կազմակերպած ահաբեկչական առանձին գործողություններն ուղղված էին կոնկրետ մարդկանց Թուրք, քուրդ, ռուս իշխանավոր բռնագատիչների հակահայ ոճրագործ գործողությունների դեմ: Դրանք հարկադրական քայլեր էին և միանգամայն արդարացված: Հեղինակն ըստ արժանվույն է գնահատել հայ ազգային հեղափոխական կուսակցությունների խաղացած դեկավար ու կազմակերպիչ դերը Թուրք-հայկական ընդհարումների ահեղ օրերին, բայց նրա ուշադրությունից չեն վրիպել կուսակցական, հասարակական շահերի թելադրանքով նրանց միջև տեղի ունեցող եղբայրասպան, ամոթալի դեպքերը (գիրք I, էջ 660–665):

Հեղինակի տեսադաշտից դուրս չի մնացել նաև հայ-վրացական հարաբերությունների խնդիրը, որը նույնպես դնալով բարդանալու միտումներ ուներ: Գրքում բացահայտված են դրա սրման տնտեսական, վարչաժողովրդագրական և անգամ սոցիալ-հոգեբանական գործոնները: Հավական է մատնանշել, որ ռուսական տիրապետության վերջին հիսուն տարում Թիֆլիսի 11 քաղաքագլուխներից 9-ը եղել են հայեր և միայն երկուսը՝ վրացի: Ցույց է տրված, որ հայ-վրացական անթաքույց հակասություններ են դրսևորվել Կովկասի վարչական կառուցվածքի (ֆեդերացիայի), Անդրկովկասում տեղական ինքնակառավարում (զեմստվո) մտցնելու և անգամ Կովկասում բուհ (պոլիտեխնիկում) հիմնելու խնդիրներում (գիրք I, էջ 533–535):

Ինչպես արդեն ասվեց, հակասություններն առավել ցցուն էին դրսևորվում հայ-ազգբեջանական հարաբերություններում: Կարելի է արձանագրել, որ XX դարասկզբի այդ մի քանի տարվա փաստական հարուստ նյութը շատ հեշտությամբ ընթերցողին բերում է այն հաստատ համոզման, թե որքան նման է անդրկովկասյան երեք ժողովուրդների բարդ ու հակասական փոխհարաբերությունների վիճակը մեր ժամանակների հետ: Իրոք, ժամանակները տարբեր են, սակայն խնդիրները, շահերը մնացել են նույնը:

Արևելահայ ու համակովկասյան խնդիրները քննված են ամենալայն ու խորը համայնապատկերի վրա: Հեղինակը իբրև ֆոն, ըստ էության, ներկայացնում է նաև Ռուսաստանի պատմությունը: Մինչև օրս սրբան էլ որ գրվել է ռուսական առաջին հեղափոխության մասին, այդուհանդերձ, ուսումնասիրության մեջ բացահայտվում են նրա պատմության բազում նոր ու մութ ծալքեր, որոնք մինչ օրս անհայտ կամ քիչ էին ծանոթ ընթերցողին: Թեև մենագրությունն ընդգրկում է մի կարճատև 1905–1907 թթ. ժամանակաշրջան, սակայն քննարկվող երևույթների ծագման սկզբունքները բացահայտելու նպատակով հեղինակը հաճախ անհրաժեշտաբար պատմական էքս-

կուրս է կատարում ավելի հետ՝ դեպի XIX դ. ու ավելի վաղ ժամանակաշրջան:

Ընթերցողի համար նորություն է համարվում այն փաստը, որ դեռ ռուս-ճապոնական պատերազմի փուլում (1904–1905 թթ.) Կ. Պոլսի քաղաքականները՝ սուլթան Աբդուլ Համիդի հովանավորությամբ, առաջնորդվելով համիսլամականության ու համաթուրքիզմի գաղափարներով և օգտվելով Ռուսաստանի ռազմաքաղաքական ծանր կացությունից, գաղտնի պլաններ էին մշակում ներխուժելու Կովկաս, ոտքի հանելու տեղի 5–6 միլիոնի հասնող մուսուլմանների ու գործնականում անջատելու Կովկասը Ռուսաստանից (գիրք I, էջ 353): Եվ միայն 1905 թ. հունիսին Պորտսմուտի հաշտությունը կանխեց նվաճողական այդ ծրագրի գործադրումը, մի ծրագիր, որը հետագայում գործողության մեջ դրեցին Կարմիր սուլթանի գործի շարունակողները երիտթուրքերը:

Գրքում լուսաբանված են մինչ այժմ հայ պատմագրության մեջ անբավարար ուսումնասիրված «Կովկասահայության առաջին համագումարի» (գիրք I, էջ 178–180), «Ռուսաստանի ընդդիմադիր կուսակցությունների խորհրդակցության» (գիրք I, էջ 180–183) և այլ պատմական եղելությունների մասին նյութերը: Ընթերցողը կգտնի համակողմանի ու սպառիչ պատասխան XX դարասկզբի հայ եկեղեցու վիճակի, 1906 թ. ռուսահայ եկեղեցու գործերը կարգավորող էջմիածնի կենտրոնական պատգամավորական ժողովի մանրամասների մասին, մի համաժողով, որին մինչ օրս պատմագիտական գրականության մեջ արվել էին իրար հակասող գնահատականներ (գիրք I, էջ 728–786):

Աշխատության մեջ առանձին էջեր են նվիրված մինչ օրս պատմակուսակցական գրականության մեջ գրեթե անտեսված «Հայ դեմոկրատական կուսակցությանը» (գիրք II, էջ 95–98): Իրոք նորություն ուզում ենք փաստել նաև, որ մարքսիզմ-լենինիզմի նախկին խորագիտակ մասնագետ պրոֆ. Հր. Սիմոնյանը մի շարք հիմնավոր փաստարկումներով համոզմունք է հայտնում, որ խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ կովկասահայ պրոլետարիատի «Իբրև ամենագիտակից տարր»-ի մասին տրված հայտնի բարձր գնահատականը պատկանում է ոչ թե Վ. Վորովսկուն, այլ հենց Վ. Ի. Լենինին (գիրք I, էջ 388–389):

Հարկ է նշել, որ նուշնսլիսի խորագնին դիտողականությամբ են հետազոտված նաև արևմտահայ իրականությունը և արևմտահայ ազատամարտի վերջին դրվագները: Հեղինակի փոխանցմամբ՝ արևմտահայ ազգային-ազատագրական պայքարը առատ սնունդ էր ստանում կովկասահայությունից թե՛ մարդկային ռեսուրսներով, թե՛ նյութական և թե՛ հոգևոր իմաստով (գիրք I, էջ 595–596): Ներկայացված են հայ առանձին գործիչների մասին մինչ օրս շատերին անհայտ հետաքրքիր մանրամասներ:

Գրախոսվող աշխատանքն այնքան հարուստ է բազմազան նյութերով, որ այն միաժամանակ կարող է վաստաթղթերի և նյութերի յուրօրինակ տեղեկատու ժողովածուի դեր կատարել: Հեղինակը չի բավարարվել դրանով, նա ավելի հաճախակի տալիս է օգտագործված փաստաթղթերի, նյութերի ու առանձին աշխատությունների խորը դիտական վերլուծություններ ու գնահատականներ: Այս իմաստով բավական է միայն ծանոթանալ ՀՅԴ «Կովկասյան նախագծին» կամ Ա. Ամիրյանի հայտնի դրքույկների մասին վերլուծություններին: Մենք կարծում ենք, որ մինչև օրս ոչ ոք ավելի խորը և համապարփակ ձևով չի ներկայացրել երիտդաշնակցական-անջատական և միհրանական շարժումները, ինչպես այս գրքում է (գիրք II, էջ 201–238): Յուրօրինակ տեղեկատուի դեր կարող են կատարել Անդրանիկի, Ն. Դուման և մյուսների կազմած ռազմագիտական (մարտական) հրահանգները, որոնց վերաբերյալ և տրված են համակողմանի մեկնաբանություններ ու վերլուծականներ (գիրք II, էջ 472–489): Այլ խոսքով՝ աշխատությունը հսկայական նյութ է մատակարարում հայ ժողովրդի պատմության այդ ժամանակաշրջանի վերաբերյալ:

Պետք է նկատել, որ պատմական նյութը շարադրված է ոչ թե չոր ու ցամաք թվերով ու փաստերով, այլ, որ ընթերցողի համար

ավելի հետաքրքիր ու գրավիչ է ճոխ ու հարուստ լեզվով, տեղ-տեղ նույնիսկ գեղարվեստական պատկերներով: Ավելին, շրջանառության մեջ են գրված վաղուց մոռացության մատնված կամ նոր բառեր՝ «դիտապաստ», «արհավրալ», «դավանագիր» և այլն:

Աշխատության ուշագրավ բաժիններից է ռուսական առաջին հեղափոխության տարիներին հայ ազգային կուսակցությունների ներսում առաջ եկած գաղափարական բուռն ալեկոծումների ու կազմակերպական խառնաշփոթի վերաբերյալ հեղինակի անդրադարձը: Համառուսաստանյան հեղափոխության լայն համայնապատկերի վրա քննության են առնված կուսակցությունների ծրագրերը, ներկուսակցական՝ «աջից» և «ձախից» պառակտումները, միջկուսակցական պայքարը և այլն:

Ինչպես արդեն ասվեց, հայ ազգային կուսակցություններից հեղինակը շատ բարձր է գնահատում ՀՅԴ ղեկավար ու կազմակերպիչ դերը հայկական միջավայրում: Տալով ՀՅԴ հիմնադիր, հայ ժողովրդի մեծ զավակներից մեկի՝ Քր. Միքայելյանի քաղաքական դիմանկարը հեղինակը գրում է. «Տեսական պատրաստվածությամբ, կազմակերպչական տաղանդով, բարոյական մաքրությամբ ու հմայքով դաշնակցության հոգևոր առաջնորդ Քրիստափորը բացառիկ տեղ է բռնում հայ ժողովրդի ազատագրական շարժման պատմության մեջ» (գիրք I, էջ 571): Առանձին բաժիններում պրոֆ. Հր. Սիմոնյանը ներկայանում է որպես ՀՅԴ խորագիտակ պատմագիր՝ առանձին դրվագներում գերազանցելով նույնիսկ Մ. Վարանդյանին ու Հր. Տասնապետյանին: Մասնավորապես, բազմահարուստ նյութերի հիման վրա, համակողմանիորեն լուսաբանված է ՀՅԴ համար անկյունադարձային նշանակություն ունեցող 4-րդ ընդհանուր ժողովը, մի համաժողով, որը եկավ հաղթահարելու ներկուսակցական ճգնաժամը, ընդունելու նոր ծրագիր ու կանոնադրություն և մշակելու նոր մարտավարություն (գիրք II, էջ 510–619):

ՀՅԴ դերն այնքան բարձր է գնահատված, որ պատմությանը ոչ լավ իրազեկ ընթերցողի մոտ կարող է ապավորություն ստեղծվել, որ նրա դերը գերագնահատված է: Բայց, մեր կարծիքով, գրքում ներկայացված է պատմական ճշմարտությունը:

Այս ամենի կողքին հեղինակն ըստ արժանվույն է գնահատել ՌՍԴԲԿ ու հատկապես նրա հեղափոխական թևի՝ բոլշևիկների խաղացած նշանակալի դերը ռուսական հեղափոխության ժամանակ (գիրք I, էջ 536–539): Ամենևին կողմնակալություն թույլ չտալով և տուրք չտալով ժամանակակից քաղաքական կոնյունկտուրային՝ ակադ. Հր. Սիմոնյանը բարձր գնահատական է տալիս բոլշևիկների գործունեությանը թե՛ Ռուսաստանի և թե՛ Հայաստանի հեղափոխական շարժման պատմության մեջ (գիրք II, էջ 284–321):

Հետաքրքրանքում հեղինակն երկխոսության ձևով քաղաքական մի յուրօրինակ բանավեճ է բացում հայ սոցիալ-դեմոկրատների և ազգային-հեղափոխական կուսակցությունների միջև՝ տաճկահայոց ազատագրության ուղիների խնդրում (գիրք II, էջ 358–384): Բերվում են երկու կողմերի փաստարկները, գաղափարաքաղաքական սկզբունքային տարբերությունները, թեր և դեմ կողմերը: Հեղինակն այդ երկու քաղաքական թևերի միջև զատորոշում է իրարից խիստ տարբեր երկու մոտեցում. մեկը (ազգային-հեղափոխական) անսահման վտանգներով ու ազնիվ հայրենասիրական մղումներով լի կենդանի գործը՝ իր ծանր հետևանքներով, իսկ մյուսը՝ (սոց.-դեմ.) սառը դատողության, արևմտահայերին ընդամենը բարոյապես աջակցելու, համակրանք արտահայտելու, Թուրքահայաստանի ազատագրության գործը համառուսական հեղափոխության հաղթանակի հետ կապելու խոսքը՝ իր անվտանգ ուղիներով: Արժևորելով այս երկու մոտեցումները հեղինակը մեր ժամանակների բարձունքից հանգում է հետևյալ եզրահանգման. «Հայոց շարժումն իր վերջնական արդյունքով ամենաողբերգականը եղավ ժողովուրդների ազգային ազատագրական շարժումների պատմության մեջ: Պատմությունն ապացուցեց, որ հայ սոցիալ-դեմոկրատները ոչ պակաս հայրենասերներ և ազգասերներ էին, միայն թե նրանք ամեն ինչ անում էին իրենց մայր ժողովրդին դեպի

ազգային պատմագրության տանել՝ որքան հնարավոր է անմտանդ ճանապարհներով» (գիրք II, էջ 384):

Գիտական, աղբյուրագիտական բարձր նշաձողը պահելով հանդերձ՝ հարկ է նկատել, որ սույն աշխատությունը գրված է հայրենասիրական մեծ ներշնչանքով, նման ոգով նոր սերունդ դաստիարակելու առաքելությամբ ե հայ ժողովրդի ճակատագրի համար անհուն մտահոգությամբ:

Այս ամենով հանդերձ՝ աշխատությունը դերծ չէ նաև մասնակի թերություններից: 1. Մեր կարծիքով դժվար է համաձայնել այն եզրահանգմանը, թե ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովը կարողացավ նոր ուժ ներարկել կուսակցությանը՝ «դիմագրավելու համար այն մեծ փորձություններին, որոնք սպասվում էին նրան և ողջ հայ ժողովրդին» (գիրք II, էջ 619): Ցավոք, Դաշնակցություն կուսակցությունը ևս անկոր եկավ դիմագրավել հայ ժողովրդին սպառնացող մեծագույն փորձությանը՝ Հայոց մեծ եղեռնին:

2. Ամենայն մանրամասնությամբ խոսելով թուրք-հայկական ընդհարումների ժամանակ հայդուկների ինքնապաշտպանական գործողությունների մասին, սակայն գրեթե ոչինչ չի ասվում և ոչ մի դրվագ չի պատմվում «Ասկերանի հերոսի»՝ Համազասպի մասին:

3. Երբեմն գրքում հանդիպում ենք խիստ որակումների հայ հոգևորականության «Ստորաքարշ հայ հոգևորականներ» (գիրք I, էջ 15) կամ ցարիզմի հասցեին՝ «բարբարոս» կառավարություն» (գիրք I, էջ 504), «ոճրագործ բռնակալություն» (գիրք II, էջ 6) և այլն:

4. Եփրեմ Դավթյանը, Արշակ Ջամալյանը ներկայացված են որպես զարաբաղցիներ (գիրք I, էջ 597), բայց նրանք ծնունդով գանձակեցիներ էին: Բացի այդ, գրքում տեղ են գտել մի շարք փաստական ու տպագրական վրիպակներ (տես գիրք II, էջ 121, 638, 651 և այլն): Սակայն վերը նշված մասնակի թերություններն ամենևին չեն նսեմացնում մենագրության բարձր արժանիքները:

Այսպիսով, կարծում ենք, որ ակադեմիկոս Հր. Սիմոնյանի «Ազատագրական պայքարի ուղիներում» ուսումնասիրությունը հրապարակ գալով, այնպիսի թաքմ և խորը հետք կթողնի հայ պատմագրության մեջ, որ այսուհետ դժվար կլինի պատկերացնել XX դ. սկզբների պատմությամբ զբաղվող որևէ ուսումնասիրողի, որը այսպես թե այնպես չանդրադառնա կամ չօգտվի սույն հիմնարար աշխատությունից:

Ինչպես արդեն ասվեց, գրախոսվող մենագրությունն ունի շարունակություն: Ուսումնասիրությունն առավել կամբողջանա և կստանա իր հանգուցալուծումը, երբ լույս կտեսնեն հաջորդ՝ 3-րդ և 4-րդ գրքերը:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ